600.0404. 31.10.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հոկտեմբերի 2018 թվականի № 404Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի №132Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Երևան քաղաքի Գևորգ Չաուշի 14/3 հասցեի բազմաբնակարան շենքի բնակիչների սույն թվականի օգոստոսի 10-ի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի ապրիլի 25-ի «Երևան քաղաքի Գևորգ Չաուշի 14/3 հասցեի բազմաբնակարան շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնելու մասին» №132Ա որոշման հավելվածում փոփոխություններ կատարելու խնդրանքով,

բ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության սույն թվականի սեպտեմբերի 18-ի №04-ԴԳ959 և Երևան քաղաքի Գևորգ Չաուշի 14/3 հասցեի բազմաբնակարան շենքի բնակիչների հոկտեմբերի 17-ի գրությունները, համաձայն որոնց՝ չեն առարկում սույն որոշմամբ սահմանվող փոփոխություններին,

և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի ապրիլի 25-ի «Երևան քաղաքի Գևորգ Չաուշի 14/3 հասցեի բազմաբնակարան շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնելու մասին» №132Ա որոշման՝

1) 1 կետի 3-րդ ենթակետում «4 416 000» թիվը փոխարինել «4 692 000» թվով.

2) հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը և Երևան քաղաքի Գևորգ Չաուշի 14/3 հասցեի բազմաբնակարան շենքի բնակիչների կողմից լիազորված անձ Աշոտ Թադևոսյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
31 հոկտեմբերի 2018թ.